ՈՍՏԱՆԻԿ ԶԱՎԵՆԻ ՄԱՐՈՒԽՅԱՆ

(Ծննդյան 75-ամյակի առթիվ)

Լրացավ հայկական ճարտարագիտական կրթության երախտավորներից մեկի՝ Հայաստանի, Ուկրաինայի և Միջազգային ճարտարագիտական ակադեմիաների իսկական անդամ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Ջերմաէներգետիկա և շրջակա միջավայրի պաշտպանություն» ամբիոնի պրոֆեսոր, ՀԱՊՀ Միջուկային անվտանգության տարածաշրջանային ուսումնավարժանքային կենտրոնի (ՄԱՏՈՒԿ) գիտական ղեկավար, ՀԱՊՀ պատվավոր պրոֆեսոր Ոստանիկ Զավենի Մարուխյանի ծննդյան 75-ամյակը:

Ոստանիկ Մարուխյանը ծնվել է 1946 թ. մարտի 4-ին Երևանում Հայաստանի հրատարակչական ասպարեզի հայտնի գործիչ Զավեն Մարուխյանի ընտանիքում: Գերազանցությամբ ավարտելով Երևանի Խ. Աբովյանի անվան դպրոցը՝ Ո. Մարուխյանը 1964 թվականին ընդունվել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի (ԵրՊԻ, հետագայում՝ ՀՊՃՀ, այժմ՝ ՀԱՊՀ) էլեկտրատեխնիկական ֆակուլտետը և մինչ այսօր իր ողջ գիտակցական կյանքն ու ստեղծագործական գործունեությունը շաղկապել հարազատ բուհի հետ:

«Ջերմային էլեկտրակայաններ և արդյունաբերական ջերմաէներգետիկա» ամբիոնի ասիստենտ Մարուխյանն այնուհետև անցել է բուհի դասախոսական տարակարգերի հաջորդական աստիճաններով՝ ավագ դասախոս, դոցենտ, ապա՝ պրոֆեսոր: Դասախոսական աշխատանքին զուգահեռ՝ բուհում վարել է ղեկավար պաշտոններ՝ 1983-1987 թթ. ՀՊՃՀ էներգետիկական ֆակուլտետի դեկանի տեղակալ, 1987-1990թթ.՝ նույն ֆակուլտետի դեկան, 1990-1992 թթ.՝ ՀՊՃՀ ուսումնամեթոդական վարչության պետ, 1992-2003 թթ.՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր: Այդ ընթացքում համատեղությամբ ղեկավարել է «Ջերմային էլեկտրակայաններ և արդյունաբերական ջերմաէներգետիկա», ապա հասարակական կարգով՝ «Շրջակա միջավայրի ճարտարագիտական պաշտպանություն» ամբիոնների աշխատանքները: Նրա կառավարչական և հատկապես մասնագիտական ունակությունների վերելքին նպաստել են ինչպես բնատուր օժտվածությունը, համառ աշխատասիրությունն ու պատասխանատվության մեծ զգացումը, այնպես էլ փորձառությունն ու գործընկերային համագործակցությունը Բուդապեշտի

տեխնիկական համալսարանի (1978-79), Աթենքի տեխնիկական համալսարանի (1996), Փարիզի միջուկային տեխնոլոգիաների հետազոտական ինստիտուտի (1997), Լունդի համալսարանի (2001) իր բնագավառի մասնագետների հետ։

Ոստանիկ Մարուխյանը ճանաչված է նաև հանրապետությունում որպես գիտակրթական և հասարակական ասպարեզների գործիչ։ Հայաստանում բարձրագույն կրթության բարեփոխումների ակտիվ նախաձեռնողներից է։ 1999թ. որպես ՀՀ Կրթության և գիտության նախարարի առաջին տեղակալ՝ նրա անմիջական ղեկավարությամբ ու մասնակցությամբ մշակվել են ոլորտի նորմատիվ փաստաթղթերի փաթեթներ՝ ուղղված բարձրագույն մասնագիտական կրթության բազմաստիճան համակարգի ներդրման գործընթացի կազմակերպմանն ու կարգավորմանը։ 2003-2006թթ. եղել է ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ պետահիրավական հարցերի մշտական և Եվրահինտեգրման հարցերի ժամանակավոր հանձնաժողովների, նաև Սահմանադրական բարեփոխումների նախագծի մշակման աշխատանքային խմբի անդամ, արժանապատվորեն է ներկայացրել ՀՀ խորհրդարանը եվրոպական տարբեր ֆորումներում։

Ո. Մարուխյանը երկու անգամ՝ 2006-2011թթ. և 2015-2020թթ., պաշտոնավարել է որպես Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ռեկտոր։ Նրա ղեկավարության շրջաններում հատկանշական են Պոլիտեխնիկի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կայուն զարգացումը, ստեղծագործական բարերար մթնոլորտի ապահովումը, տասնամյակների ընթացքում հաստատագրված պոլիտեխնիկական ավանդույթների պահպանումն ու զարգացումը։

Նրա ղեկավարության հատկապես վերջին 5 տարիներին Պոլիտեխնիկում ստեղծվեցին արդիական ուսումնահետազոտական սարքավորումներով կահավորված երկու գերազանցության կենտրոնները, անօդաչու սարքերի՝ տարածաշրջանում առայժմ միակ ուսումնահետազոտական ինքնատիպ կառույցը, հաջողությամբ ավարտվեց յուրօրինակ և թանկարժեք գիտահետազոտական սարքերով ու գործիքամիջոցներով հագեցած «Պոլիտեխնոպարկի» ձևավորման ծավալուն գործընթացը։ Նոր որակ և բովանդակություն ստացավ հիմնական գործընկեր կազմակերպությունների հետ փոխշահավետ համագործակցությունը, որի արդյունքում իրողություն դարձավ ուսանողական համակազմի կրթաթոշակների՝ ուսումնառությունը խրախուսող աննախադեպ համակարգի ներդրումը։ Իրականացվեցին ՀԱՊՀ Ստրատեգիական պլանով նախատեսված արմատական կառուցվածքային փոփոխությունները. ձևավորվեցին ներհամալսարանական կրթագիտական խոշոր միավորները՝ ինստիտուտները, վերակազմակերպվեցին մի շարք ամբիոնային միավորներ, առավել կուռ կազմակերպական ձևի անցան համալսարանական քոլեջը և ավագ դպրոցը, սկսեց գործել համալսարանի ընդունելության կազմակերպման շուրջտարյա կառուցվածքային ստորաբաժանումը։ Կտրուկ

բարելավվեց համալսարանի ֆինանսական վիճակը, ինչը հնարավորություններ ընձեռեց լսարանային ֆոնդի վերանորոգման գործընթացի ծավալման, նյութա-տեխնիկական բազայի թարմացման և աշխատավարձի բարձրացման համար: Մեկնարկեց և առայսօր շարունակում է գործել առողջապահության ապահովագրման հույժ կարևոր համակարգը:

Մարուխյան-մասնագետի անմիջական ջանքերով Պոլիտեխնիկում ներդրվել է մասնագիտական նոր ուղղություն՝ «Շրջակա միջավայրի պաշտպանություն էներգետիկայի ճյուղում», և այսօր ՀԱՊՀ էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ինստիտուտում նրա կողմից ղեկավարվող կրթական տարբեր ծրագրերով իրականացվում են գիտակրթական գործառույթներ և պետբյուջետային ֆինանսավորմամբ գիտահետազոտական թեմաներ ու պայմանագրային աշխատանքներ: ԱՄՆ-ի էներգետիկայի դեպարտամենտի հետ Ռ. Մարուխյանի նախաձեռնած համագործակցային փոխհարաբերությունները տվել են ցանկալի արդյունք. ստեղծվել է Հարավային Կովկասում Միջուկային անվտանգության տարածաշրջանային եզակի կենտրոն, որտեղ իրականացվող դասընթացներն ու վարժանքները, ներդրված արդիական սարքավորումների ու գործիքամիջոցների շնորհիվ, էապես բարելավել են մի քանի մասնագիտությունների գծով ուսումնառության կազմակերպման գործընթացը, նպաստել գիտամեթոդական և հետազոտական մշակումների ընդլայնմանը: Ռ. Մարուխյանը մեծ հաջողությամբ ղեկավարում է նաև «Միջուկային էներգետիկա և կրիմինալիստիկա» բազային գիտահետազոտական լաբորատորիայի աշխատանքները:

Վաստակաշատ պրոֆեսորը թվով 150 գիտական աշխատանքների, այդ թվում՝ արժեքավոր մենագրությունների, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների հեղինակ ու համահեղինակ է: Պրոֆեսոր Մարուխյանը գիտական աստիճաններ շնորհող Էներգետիկայի – 043 մասնագիտական խորհրդի նախագահն է: Նրա ղեկավարությամբ բազմաթիվ ուսանողներ և մագիստրանտներ հաջողությամբ կատարել և կատարում են գիտական աշխատանքներ, թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել 13 ասպիրանտներ, ովքեր այսօր իրենց ներդրումն ունեն ինչպես համալսարանում, այնպես էլ ՀՀ էներգետիկայի ոլորտի կառավարման տարբեր կառույցներում: Պրոֆեսոր Մարուխյանի և նրա սաների գիտական հետաքրքրությունների բավականին լայն շրջանակը ներառում է ժամանակակից ՋԷԿ-երի և ԱԷԿ-ների ներկայանային և էներգահամակարգային աշխատանքային ռեժիմների լավարկման մեթոդների մշակումը և էլեկտրակայաններում տեխնիկական ջրամատակարարման՝ ջրախնայողական ու բնապահպանական տեսանկյունից անբասիր համակարգերի ներդրմանն առնչվող հիմնախնդիրների լուծման ուղիների փնտրտուքը:

Ռ. Մարուխյանը «ՀԱՊՀ Լրաբեր» գիտական հոդվածների ժողովածուի խմբագրական խորհրդի նախագահն է, «ՀՀ ԳԱԱ և ՀԱՊՀ Տեղեկագրի տեխնիկական

գիտությունների սերիա» և «ՀԱՊՀ Բանբեր» գիտական հանդեսների խմբագրական խորհուրդների անդամ:

Մարդկային բարձր արժանիքներն են բնութագրում Մարուխյան-գործչին և Մարուխյան-մարդուն. գիտակրթական ասպարեզի առանցքային բոլոր հարցերում գրագիտությունն ու խորագիտակությունը, իր Ալմա մատերի և նրա ավանդույթների հանդեպ տիրոջ պատասխանատվության բարձր զգացումը, գործընկերների և ուսանողության նկատմամբ անաչառ, սրտացավ ու հավասարակշռված գործելակերպը բնորոշում են նրան՝ որպես համակողմանի կրթված, տասնամյակների իր բազմավաստակ գործունեությամբ իմաստնացած մտավորականի:

Ոստանիկ Մարուխյանի արժանիքները բարձր են գնահատվել ինչպես ՀՀ Կառավարության, այնպես էլ միջազգային և ՀՀ տարբեր կազմակերպությունների ու բուհերի կողմից: Ո. Մարուխյանի՝ գիտակրթական, ուսումնակազմակերպչական, պետական-հասարակական ոլորտներում ունեցած պատկառելի վաստակը և հայանպաստ ու հայրենանպաստ գործունեությունը նշանավորված են ՀՀ «Անանիա Շիրակացի», ԱՀ «Երախտագիտություն», «Վաչագան Բարեպաշտ» մեդալներով, ՀՀ Կրթության և գիտության նախարարության ոսկե հուշամեդալով, ՀՀ Պաշտպանության «Վազգեն Սարգսյան» և ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության «Համագործակցություն՝ հանուն փրկության» մեդալներով, ԱՀ «Մայրություն», ՀԿ «Մայրական երախտագիտություն», ԱՀ զոհված ազատամարտիկների հարազատների միության «Մայրական պատգամ» մեդալներով, Հայաստանի Ճարտարագիտական ակադեմիայի ոսկե և արծաթե մեդալներով, Միջազգային ինժեներական ակադեմիայի «Ինժեներական արիություն» և ոսկե մեդալներով, Ռուսաստանի ինժեներական ակադեմիայի «Ինժեներական փառք» մեդալով, ՌԴ Անվտանգության դաշնային ծառայության և ՀՀ Երկրապահների միության հոբելյանական մեդալներով, ՀՊՃՀ, ԵՊՀ, ՀՊՄՀ, ՀԱՊՀ ոսկե հուշամեդալներով և բազմաթիվ պատվոգրերով ու շնորհակալագրերով:

Կրթական-հասարակական ոլորտների բազմահմուտ գործիչը, իր բնագավառի ճանաչված գիտնականը և խորապես հայեցի նկարագրով օժտված մտավորականն այսօր էլ գիտամանկավարժական և կազմակերպչական ունակությունների բարձունքում է, անխոնջ եռանդով իր ավանդն է ներդնում Հայաստանում տեխնոլոգիական կրթության զարգացման գործին՝ ի շահ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի բարգավաճման:

ՀՀ ԳԱԱ և ՀԱՊՀ Տեղեկագրի տեխնիկական գիտությունների սերիայի խմբագրական խորհուրդը սիրով շնորհավորում է իր գործընկերոջը՝ պրոֆեսոր Ոստանիկ Մարուխյանին, ծննդյան տարեդարձի առթիվ և մաղթում առողջություն, գիտական նորանոր ձեռքբերումներ: